

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

07 » « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.

թիվ 484 հրամանով



« Գ Ե Դ Ա Ր Գ Ո Ւ Ն Ի Ք Ի Տ Ա Ր Ա Ծ Ա Շ Ր Ջ Ա Ն Ա Յ Ի Ն

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ք Ո Լ Ե Ջ»

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ո Չ Ա Ռ Ե Վ Տ Ր Ա Յ Ի Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ո Ն Ն

Մ Կ Մ Ն Ա Կ Դ Ա Ս Ա Խ Ո Մ Ն Ե Ր Ի Մ Ե Ն Թ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

Ք Ա Դ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Շ

Նախաբան

Մենթորությունը Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի կադրային քաղաքականության առանցքային տարրերից մեկն է: Մենթորությունը բարձր որակավորում ունեցող, փորձառու դասախոսի աշխատանքն է երիտասարդ մասնագետի հետ, որը չունի դասավանդման աշխատանքային փորձ:

I. Մենթորը բարձր որակավորում ունեցող դասախոսն է, որն ընտրվում է քոլեջի տվյալ մասնագիտության առարկայական հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ:

Մենթորությունը հաստատվում է երիտասարդ դասախոսների նկատմամբ մեկ տարվա ընթացքում՝ սկսած նրա աշխատանքի անցնելու պահից:

Մենթորությունը ենթադրում է՝

- դասավանդման, ուսուցման անխզելիության ապահովում,
- դասավանդողի մոտ բոլոր դերերի իրականացում,
- նոր գաղափարներով կիսվելու և նորարական գործունեության խթանման կարևորություն,
- սկսնակ դասախոսների՝ մանկավարժության գործընթացում ներգրավումը հեշտացնելու նպատակով մենթորության ապահովում:

Սկսնակ դասախոսների համար կարևոր են՝

- կազմակերպչական կարողությունների ձեռք բերումը,
- մանկավարժական հմտությունների ձեռքբերումը և փորձառության զարգացումը,
- ծառայողական առաջընթացի հիմքերի ստեղծումը:

II. Նպատակը և խնդիրները՝

Այս քաղաքականության նպատակը քոլեջում սկսնակ դասավանդողների մենթորության ապահովումն է: Մենթորությունը նպաստում է դասավանդման և ինքնազարգացման ոլորտում առաջավոր փորձի ձեռք բերմանը և նորարական ծրագրերի իրականացմանը:

Քաղաքականության նպատակն է՝

- Լավագույն փորձի ընդօրինակման սկզբունքի վրա հիմնելով՝ ապահովելով մենթորության ընդհանուր շրջանակներ,
- Երիտասարդ մասնագետներին օգնություն ցուցաբերել՝ նրանց կողմից մասնագիտական և մանկավարժական կարողությունների ու հմտությունների ձևավորման, ձեռք բերման հարցում,

- Ջարգացնել սկսնակ դասախոսի վերլուծական, կրթության բարեփոխումների ուղղությամբ առաջարկություններ մշակելու և ներկայացնելու ունակությունները:

Խնդիրներն են՝

- սկսնակ դասավանդողների հարմարեցում, քոլեջի էթիկայի նորմերի և ներքին կանոնների հետ ծանոթացում և յուրացում,
- երիտասարդ դասախոսների օգնության ցուցաբերում դասավանդման մեթոդաբանության և դաստիարակչական ձևերի յուրացման հարցում,
- մասնագիտական մակարդակի բարձրացում, թիմային աշխատանքի ունակության և հաղորդակցման մշակույթի զարգացում,
- երիտասարդ դասախոսների մոտ կատարվող աշխատանքի նկատմամբ հետաքրքրության սերմանում, բարձր մասնագիտական և բարոյական որակների, պատասխանատվության ձեռք բերում,
- ընտրած մասնագիտության նկատմամբ շահագրգռվածության բարձրացում,
- երիտասարդ դասախոսների մոտ այնպիսի որակների ձևավորում, որոնք հնարավորություն կտան աշխատանքային տարբեր իրավիճակներում բարենպաստ որոշումներ կայացնելու,
- երիտասարդ դասախոսների ընկալունակության զարգացում ուսանողական և դասախոսական մակարդակներում հաղորդակցման հարաբերություններում:

III. Մենթորության կազմակերպման տեսակները՝

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ -ում մենթորության կազմակերպման հիմնական տեսակներն են՝

Անհատական մենթորություն՝

- երբ մեկ մենթորին կցվում է մեկ սկսնակ դասախոս: Տվյալ դեպքում մենթորը իրեն կցված դասախոսին ամբողջ ուսումնական տարվա ընթացքում բացատրում է ուսումնական գործընթացի կազմակերպման նրբությունները, ներկայացնում այն փաստափղթերի ցանկը, որը նա պետք է ունենա դասավանդման գործընթացը իրականացնելու համար, ծանոթացնում կրթական մեխանիզմներին ու առանձնահատկություններին և մանկավարժության էթիկային:

Խմբային մենթորություն՝

- երբ մեկ մենթորը աշխատում է իրեն կցված երկու սկսնակ դասախոսների հետ՝ փոխանցելով մանկավարժական և մասնագիտական փորձը, դասավանդման մեթոդաբանությունը և կրթական մեխանիզմները:

IV. Իրավասություններ և պատասխանատվություն

Այս քաղաքականությունն իրականացնող մարմիններն են քոլեջի տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, մանկավարժական խորհուրդը, տվյալ մասնագիտությամբ առարկայական հանձնաժողովի նախագահը, կադրերի բաժինը, որոնք զբաղվում են կադրերի ապահովման և զարգացման հարցերով:

Քաղաքականության կառավարող մարմինը քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և մանկավարժական խորհուրդն են: Քաղաքականության բուն իրականացման պատասխանատվությունը կրում է խնամակալ նշանակված դասախոսը:

V. Քաղաքականության իրականացում

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ում մենթորությունը պետք է երաշխավորի երիտասարդ կադրերի զարգացումը և քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացումը: